



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 6 ՓԵՏՐՈՒՐ, 2023

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹԵ (միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 20 ԱՂՈԹՔ ԹԱԳԱԻՈՐԻՆ ՀԱՄԱՐ

**Տ**էրը թող լսէ աղօթքներդ, երբոր անձկութեան մէջ ես.  
մեր հայրերուն Աստուածը ինք թող պաշտպան ըլլայ քեզի:  
Քեզի օգնութիւն թող դրկէ իր սրբարանէն,  
եւ Սիոնէն քեզ գորացնէ:  
Տէրը թող յիշէ քու նուէրներդ,  
եւ գոհերդ ընդունելի համարէ:  
Տէրը սրբիդ համեմատ թող փայ քեզի,  
եւ քու բոլոր փափաքներդ կատարէ:  
Մենք քու բերած փրկութեամբդ պիտի ցնծանք,  
եւ Աստուծոյ յաղթանակին դրօշը պիտի կրենք:  
Տէրը կատարէ բոլոր խնդրանքներդ:  
Հիմա գիտցայ որ Տէրը կը փրկէ իր օծեալը,  
անոր աղօթքին պատասխան կու տայ իր սուրբ երկինքէն,  
եւ իր գորութեամբ անոր մեծամեծ յաղթանակներ կը պարգեւէ:  
Ոմանք իրենց պատերազմի կառքերուն,  
ուրիշներ ձիերու կ'ապաւինին,  
բայց մենք Աստուծոյ՝ մեր Տիրոջ կ'ապաւինինք:  
Անոնք պիտի ծունկի գան եւ իյնան,  
մինչ մենք կանգուն պիտի մնանք, գլուխնիս բարձր:  
Ով Տէր, փրկէ թագաւորը,  
երբ քեզ կանչենք՝ պատասխան Կուր մեր աղօթքներուն:

### ՇԱՐԱԿԱՆ ԱՊՈԹԵ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց աղքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ ճո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
Եւ ողորմեա՛ ճո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*



**ԱՂՈԹՔ ԹԱԳԱԲՈՐԻՆ ՀԱՄԱՐ**

Հերաքրքրական Սաղմոս աղօթք տղուած թագաւորին: Այս Սաղմոսը կը պարկանի թագաւորական Սաղմոսներու շարքին: Այս Սաղմոսին բովանդակութիւնը ցոյց կու փայ, թէ ինչպէս փութալ երկրի մը քաղաքացին, կամ քաղաքացիները պա-րականութիւնը ունին աղօթելու երկրի թագաւորին համար, որովհետեւ այդ թագաւորին աղօթելը նաեւ կը նշանակէ աղօթել իրենք իրենց համար: Որովհետեւ եթէ երկրի թագաւորը լաւ է, ուրեմն քաղաքացիները լաւ են: Թագաւորը պարպականութիւնը ունի եւ պարպախանափութիւնը քաղաքացիներուն նկարմամբ: Այդ ուրիշ հարց որ թագաւորը ըլլայ ոչ պիտանի: Ահա թէ ինչու երբ Իսրայէլի ժողովուրդը նայելով զինք շրջապատող ժողովուրդներուն ինք եւս ուզեց ունենալ թագաւոր, եւ ահա Սաուղ առաջին թագաւորն էր, որ սակայն երբեք ալ Աստուծոյ կամքին համաձայն չեղաւ ու չհետեւեցաւ, այլ գործեց ու ապրեցաւ Աստուծոյ կամքին հակառակ, եւ ահա Աստուած ալ ուզեց զինք հեռացնել գահէն եւ անոր փեղ պիտի նշանակուէր Դաւիթը: Սա կը նշանակէ, որ Աստուածաշունչը կու գայ մեզի տրվեցնելու, որ իւրաքանչիւր երկրի թագաւոր, նախագահ, Վարչապետ, ինչպիսի փիլոսոփներ ալ փրոուին, խորքին մէջ անոնք ուրիշ բան չեն եթէ ոչ Աստուծոյ ներկայացուցիչը երկրի վրայ: Ահա թէ ինչու Քրիստոս պիտի ըլտը Պիղատոսին, առանց Հօրս կամքին դուն իմ վրաս իշխանութիւն պիտի չունենայիր: Յաւօք սրտի, սակայն մարդ արարածը, այս պարագային այն մարդը որ իշխանութեան գլուխ կանցնի կարծելով թէ ամէն իշխանութիւն ունի, մոռնալով որ այդ իշխանութիւնը փրուած է իրեն:

Անցնելով Սաղմոսին, վերնագիրը կ'ըսէ, աղօթք թագաւորին համար: Ի միջի այլոց մենք ալ ժամերգութեան ընթացին, պարարագի ընթացքին ու աւարտին կը յիշարակենք փեղույն իշխանութեան ու թագաւորութեան մասին, որպէսզի Աստուած բարօր կեանք ու իմաստութիւն շնորհէ, որպէսզի ըստ այնմ ղեկավարեն: Ահա առաջին իսկ բառերը մաղթանք են, որ Տէրը, մեր հայրերուն Աստուած ինք լսէ թագաւորին աղօթքը, մանաւանդ երբ թագաւորը անձկութեան մէջ է: Նախ փողերը, ցոյց կու փան, որ թագաւորը Աստուծոյ հետ կապ ունեցող թագաւոր է: Այս կապը կը փեսանենք աղօթք բառին մէջ: Երբ աղօթող ես, ուրեմն Աստուծոյ հետ կապի մէջ ես: Աստուած եւ մարդը կապը աղօթքի ճամբով է, այսինքն՝ Գրիգոր նարեկացիի բացատրութեամբ, «Ի խորոց սրտի խօսք ըսն Աստուծոյ»: Այս փողերը նաեւ ցոյց կու փան, որ թագաւորը նաեւ անձկութեան մէջ է, եւ անձկութիւն կը նշանակէ մտահոգութիւն, նեղութիւն, մտատանջութիւն: Եւ ինչու արդեօք թագաւորը անձկութեան ու մտահոգութեան մէջ է, կը նշանակէ, երեւի տնտեսական, ընկերային, քաղաքական որոշ պայմաններու մէջէն կանցնի քաղաքը որուն համար ալ թագաւորը մտահոգ է, այնպէս ինչպէս ընտանիքի պատասխանատուն, հայրը կամ մայրը, կամ երկուքը, մտահոգ են իրենց զաւակներով: Ուրեմն երբ անձկութեան մէջ է, թող Աստուած լսէ աղօթքը, օգնութեան կանչը, ու պաշտպան ըլլայ իրեն: Որովհետեւ երբ Աստուած պաշտպանէ թագաւորը, պաշտպանած կ'ըլլայ նաեւ ժողովուրդը: Եւ այդ օգնութիւնը ըլլայ աստուածային օգնութիւն: Որովհետեւ, իբրեւ մարդ, կրնանք ունենալ պահեր, երբ օգնութիւն կ'ուզենք, կը կարօտինք, եւ ահա սպասում ունինք, թէ ուրկէ կրնայ գալ: Այս պարագային, աղօթող կը խնդրէ, որ այդ օգնութեան համար եղած աղօթքը, նաեւ գայ նոյնինքն Աստուծմէ, Միոնէն, որ նաեւ զԱստուած յիշեցնող խորհրդանիշ է:

Թող նաեւ Աստուած ընդունելի ընէ այն նուէրներն ու ընծաները, որ թագաւորը կ'ընծայէ Աստուծոյ, իբրեւ խնդրանք, կամ իբրեւ երախտագիտութիւն, շնորհակալութիւն: Նաեւ թող Աստուած ինք կատարէ փափաքներդ, եր սրտիդ համաձայն տայ: Այստող սրտիդ համաձայն նաեւ կը նանակէ, ինչ որ խորհուրդներդ են, այդ խորհուրդներուդ համաձայն: Որովհետեւ Աստուածաշունչին մէջ սիրտը բացատրութիւնը նաեւ խորհուրդներ կը խորհրդանշէ: Հետաքրքրական է արտայայտութիւնը, «Մենք պիտի ցնձանք քու բերած փրկութեամբդ, եւ Աստուծոյ յաղթանակի դրօշը պիտի բարձր կրենք»: Հիմա գիտցայ, որ Աստուած կը փրկէ իր օծեալը, եւ կը պարասխանէ անոր աղօթքներուն, երկինքէն: Թագաւորը երկրի վրայ է, բայց Աստուած երկինքէն կը պարասխանէ: Ի փարբերութիւն, երկրաւոր աստուածներու: Եւ ոչ միայն մէկ, այլ մեծամեծ յաղթանակներ կը պարգեւէ: Ահա համեմատական է որ կ'ընէ, թէ որու է որ կապալինինք: Ոմանք ձիերու, ուրիշներ պարտերազմի կառքերուն, իսկ մենք Աստուծոյ: Անոնք բոլորն ալ ծունկի պիտի գան նոյն այդ Աստուծոյն, իսկ անոնք որոնք Աստուծոյ ապաւինած են, գլուխնին բարձր: Այս երեւոյթը նաեւ Յայտնութիւն Յովհաննու գիրքին մէջ կը կարդանք, երբ Քրիստոսի երկրորդ գալուստին ինչպիսին պիտի ըլլայ վիճակը մարդկութեան:

Անգամ մը եւս կրկնելով, կը խնդրէ, փրկէ թագաւորը, եւ երբ մենք աղօթենք քեզի լսէ մեր աղօթքները: Այս Սաղմոսը որքան երկրաւոր թագաւորի մասին է, սակայն եւ այնպէս անոր մէջ Դաւիթ կը փեսանէ Թագաւորներու Թագաւոր Յիսուս Քրիստոսը, երբ Հայրն Աստուած լսեց Անոր աղօթքները, եւ Անոր բերած փրկութեամբ ցնձաց ամբողջ աշխարհը: